



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունիսի 2012թ.

N 383-Ն

ք.Ստեփանակերտ

### ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14<sup>1</sup>-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Ստեղծել ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոներ պարունակող ընդերքի տեղամասերի նկատմամբ հանքային իրավունքի ձևավորման միջգերատեսչական մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

2. Հաստատել ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոներ պարունակող ընդերքի տեղամասերի նկատմամբ հանքային իրավունքի ձևավորման միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարին՝

1) հանձնաժողովից աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը և նախնական պայմանագիրն ստանալուց հետո աճուրդում հաղթողին տրամադրել համապատասխան լիցենզիա՝ նախնական պայմանագրում ամրագրված ժամկետում.

2) մրցույթով տրամադրվող հանքարդյունահանման լիցենզիաներում ամրագրել լիցենզիայի հերթական համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամկետը, ընդերքի այն տեղամասի նկարագրությունը և հատակագիծը, որի նկատմամբ այն տրված է և տեղեկություններ՝ հաստատված պաշարների մասին.

3) մրցույթով տրամադրվող ուսումնասիրության լիցենզիաներուն ամրագրել լիցենզիայի հերթական համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամկետը, ընդերքի այն տեղամասի նկարագրությունը և հատակագիծը, որի նկատմամբ այն տրված է:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

razmavar2.

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ.

N \_\_\_\_\_ որոշման

**Կ Ա Ձ Մ**

**ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ  
ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՍԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

- Ա. Հարությունյան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ  
(հանձնաժողովի նախագահ),
- Կ. Եսայան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
տնտեսական զարգացման նախարար  
(հանձնաժողովի նախագահի տեղակալ),
- Կ. Պետրոսյան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արտադրական ենթակառուցվածքների նախարար,
- Կ. Շահրամանյան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
քաղաքաշինության նախարար,
- Գ. Գրիգորյան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և  
բնական ռեսուրսների վարչության պետ,
- Լ. Գրիգորյան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարությանն առընթեր անշարժ գույքի  
կադաստրի պետական կոմիտեի նախագահ,
- Ա. Հարությունյան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարությանն առընթեր փրկարար ծառայության  
տնօրեն,
- Ս.Աբրահամյան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
տնտեսական զարգացման նախարարի տեղակալ  
(հանձնաժողովի քարտուղար):

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵՎԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԱՎԱԳՅԱՆ**

«\_\_\_» \_\_\_\_\_ 2012թ.

N \_\_\_\_\_ որոշման

## Գ Ո Ր Ծ ՈՒ Ն Ե Ռ Թ Յ Ա Ն Կ Ա Ր Գ

### ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՍԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն կարգով սահմանվում են ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոներ պարունակող ընդերքի տեղամասերի նկատմամբ հանքային իրավունքի ձևավորման միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործառույթներն ու գործունեության կարգը:

2. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոներ պարունակող ընդերքի տեղամասերի (այսուհետ՝ տեղամաս) ցանկերի քննարկումն ու հաստատումը.

2) յուրաքանչյուր դեպքում աճուրդի ներկայացվող՝ տեղամասի ընտրությունը.

3) յուրաքանչյուր դեպքում նախնական պայմանագրում ամրագրվելիք պայմանների, իրավունքների, պարտականությունների ու դրանց կատարման ժամկետների որոշումը.

4) տնտեսավարող սուբյեկտից դիմում ստանալու դեպքում տվյալ տեղամասի նկատմամբ հանքային իրավունքի ձևավորման աճուրդային գործընթացի կազմակերպումը.

5) յուրաքանչյուր դեպքում աճուրդ հայտարարելու համար անհրաժեշտ երկրաբանական տեղեկատվության տրամադրումը.

6) լոտերի մեկնարկային գների, նախավճարի չափերի սահմանումը.

7) աճուրդների կանոնակարգերի, մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի հաստատումը.

8) աճուրդների մասին հրապարակային ծանուցումների հրապարակումը:

3. Հանձնաժողովը կարող է իրականացնել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

4. Լոտերի մեկնարկային գները սահմանել՝

1) ուսումնասիրության նպատակով աճուրդի անցկացման դեպքում՝ ընդերքի հատկացվող տեղամասի յուրաքանչյուր հեկտարի համար՝ 3000 դրամ.

2) հանքաարդյունահանման նպատակով աճուրդի անցկացման դեպքում՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոնուսի չափը:

5. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

6. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է նրա անդամների 2/3-ը:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունված են համարվում, եթե դրանց օգտին քվեարկել է հանձնաժողովի նիստին մասնակցած անդամների կեսից ավելին: Հավասար ձայների դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

8. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք.

2) հանձնաժողովի անունից ստորագրում է հանձնաժողովի որոշումները, նիստերի արձանագրությունները, աճուրդի արդյունքների մասին արձանագրությունները և նախնական պայմանագրերը:

9. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նախագահի պարտականությունները կատարում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ – ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԱՎԱԳՅԱՆ**